

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020 թվականի սեպտեմբերի 16-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովն անցկացվեց դասղեկ Ն. Հովհաննիսյանի գլխավորությամբ և բոլոր ծնողների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները:
2. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին. - «Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները» հարցը:

Դասղեկ Ն. Հովհաննիսյանը մանրամասնորեն ներկայացրեց այս տարվա ուսումնական գործընթացի կազմակերպումը և անցկացումը համաճարակային պայմաններում: Նա նշեց, որ միայն համատեղ ջանքերով կկարողանան լուծել նման պայմաններում համապատասխան պահանջների կատարման ընթացքում առաջացած խնդիրները:

Դասղեկը ներկայացրեց պահանջները և դրանց կատարման կարևորությունը: Ըստ պահանջի՝ աշակերտները դպրոց են հաճախելու խորհրդով յուրաքանչյուր խումբը շաբաթական 3 անգամ, պետք է խստագույնս հետևեն հակահամաճարակային կանոնների պահպանմանը, նախապես ջերմաչափվեն տանը, դպրոց ներկայանան դիմակով, հաճախ օգտվեն դպրոցում առկա ձեռքերի ախտահանման միջոցներից, պահման են 1,5-2 մետր սոցիալական հեռավորություն: Նա ասաց, որ դասարանում արդեն սեղան, աթոռները դասավորված են ըստ ուղեցույցի պահանջների:

Որոշվեց.- Հետևողական լինել այդ պահանջների կատարման հարցում, օգնել դասղեկին այս բարդ և պատասխանատու գործում :

2. Քննարկվեց. - Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Ընկեր Հովհաննիսյանը նշեց, որ այս նոր ուսումնական տարում նույնպես ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Արրահամյան Տաթևիկ
2. Գինոսյան Գոհար
3. Ծառուկյան Մարիամ
4. Ավետիսյան Քրիստինե
5. Եպիսկոպոսյան Նվարդ

Ակտիվ քվեարկության արդյունքում ձևողական խորհրդի նախագահ ընտրվեց Արրահամյան Տաթևիկը:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:

3. Լսեցին.-Ընթացիկ հարցեր /դասացուցակ, ռեժիմ/:

Պատկերը նշեց, որ նոր ուսումնական տարում դասերը սկսվելու են ժամը 9⁰⁰ ին, ավարտվելու են 13⁵⁵-ին (դասամիջոցները կրճատվել են), աշակերտները դասամիջոցներին տեղաշարժվելու իրավունք չունեն: Ուսուցումը վեգորա է:

Թեմատիկ գրավորների համար տետրեր անհրաժեշտ չեն: Աշակերտները իրենց թեմատիկ գրավորները ներկայացելու են թղթերի վրա գրված:

Աշակերտները գրատախտակի վրա առաջադրանքներ չեն կատարելու, այլ յուրաքանչյուրն իր տետրում է առաջադրանք կատարելու:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև կարգապահության և վարքի վրա:

Նա կրկին հորդորեց, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին, նախապես ջերմաչափված, պաշտպանիչ դիմակով, անհրաժեշտ պարագաներով, աշակերտավայել կեցվածքով: Պահպանեն հակահամաճարակային բոլոր կանոնները:

3.Որոշեցին.

Աշակերտներին կրկին ներկայացնել ընդհանուր պահանջները և հետևողական լինել դրանց կատարմանը:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝



S. Արրահամյան
Մ. Ծառուկյան